ԱՆԿԱՊ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐ ԵՆՔ ԴԱՐՁԵԼ

«1991 թ. ընտրություններից հետո Հայաստանում այլեւս չեն եղել համապետական միջոցառումներ, որոնց արդյունքն ընդունված լինի ժողովրդի կողմից՝ որպես հաղթանակ, որպես առաջադիմության մեկ քայլ»,- հետընտրական իր մտահոգությունները մեզ հետ զրուցում կիսեց 1990-ականների հայտնի քաղաքական գործիչ Ալբերտ Բաղդասարյանը: Ի դեպ, որ առավել հետաքրքրական է, մեր զրուցակիցը Հայաստանի համար ավելի կարեւորում է Սահմանադրության օրինականությունը, քանի որ համոզված է, որ դա է առաջընթացի գրավականը: Ուստի, անդրադառնալով 1995-ի եւ 2005-ի հանրաքվեներին, ցավով արձանագրում է, որ առաջին դեպքում այն կեղծվեց, իսկ երկրորդ դեպքում՝ անտեսվեց: «Բոլոր համապետական միջոցառումները եղել են ինչ-որ խմբի համար. գնալով ավելի փոքր խմբի, ավելի շատ՝ դրսի, քան ներսի»՝ ասում է Ալբերտ Բաղդասարյանը՝ ավելացնելով, որ երդման արարողության ժամանակ ինչած Սերժ Սարգսյանի խոսքը դրսի «գալուչկան» ստանալու համար էր», «ժողովրդավարություն, կոռուպցիայի վերացում, յուրաքանչյուրին հասանելի լինել ... զորքով շրջապատված եւ յուրաքանչյուրին հասանելի՞ ...»՝ հարցնում է Ա. Բաղդասարյանը:

Համեմատելով խորհրդային տարիների հետ՝ պարոն Բաղդասարյանն ասում է. «Մենք դուրս եկանք այդ բուրգից, բայց պահպանեցինք բուրգի գաղափարն ու գաղափարախոսությունը մեր հիմնական օրենքում: Դա է պատճառը, որ բուրգի գլուխը դրսում անպայման տեր պետք է փնտրի: Իսկ դա ենթադրում է, որ Հայաստանն աստիճանաբար աշխարհի համար հետաքրքրություն չի ներկայացնի: Իսկ դրա համար, շատ ճիշտ էին հաշվարկել 1995-ից հետո, Հայաստանին պետք է 700-750 հազար բնակիչ: Այդքան մարդը բավարար են բանկային համակարգի, տուրիզմի զարգացման եւ այդ տուրիստներին սպասարկող գյուղատնտեսության զարգացման համար: Եթե նկատել եք՝ Հայաստանին տրվող բոլոր վարկերը ենթակառուցվածքների զարգացմանը, կոռուպցիայի խորացմանն են ուղղված: Կոռուպցիայի խորացմանն են ուղղված նաեւ գրանտները: Մեր իշխանություններն էլ, լավ հասկանալով իրավիճակը, միջազգային կառույցների նման խոսում են կոռուպցիայից ու շարունակում այն ավելի խորացնել»: Մեր զրուցակիցը նաեւ դա է համարում հիմնական պատճառը, որ մեր իշխանություններն այնքան էլ չեն անհանգստանում արտագաղթից, ավելին՝ խոսելով ներգաղթի մասին, վատ ընտրություններով նպաստում են արտագաղթին, արդյունքում «հայտնվում զորքի շրջափակման մեջ երդվողի կարգավիճակում»:



Ա. Բաղդասարյանը նաեւ նկատում է. «Մենք երբեք չենք ունենա նորմալ Սահմանադրություն, որովհետեւ, եթե մենք չենք հասկանում, թե ինչպիսի Սահմանադրությունը կապահովի մեր առաջընթացը ... ոչ մի Վենետիկի հանձնաժողով շահագրգռված չէ, որ հայ ժողովուրդը միավոր դառնա, որի հետ հարկ լինի հաշվի նստել, գլխացավանքի տակ մտնել»: Եւ այն, որ որեւէ երկիր մեր նախագահական ընտրությունների առիթով դեմարշ չարեց, ու բոլոր երկրների ներկայացուցիչները մասնակցեցին Սերժ Սարգսյանի երդման արարողությանը, մեր զրուցակցի կարծիքով՝ դա մեր նկատմամբ աշխարհի վերաբերմունքն էր: Փաստելով, որ տարածաշրջանի վերջին երկաթգծային ծրագրերից հետո Հայաստանն այլեւս հետաքրքրությունների խաչմերուկ էլ չէ, Ա. Բաղդասարյանը պատկերավոր ասում է. «Դառնում ենք խաչմերուկների կալցեւոյը, որին շրջանցում են, անկապ տեսարժան վայր ենք, բայց մեր կուսակցություններն ու գործիչները պատեհ-անպատեհ իրենց կարեւորում են՝ Հայաստանի միջազգային կարեւորության հաշվին»: Ու, ի հեճուկս ԼՂՀ հարցում ավելի ուժեղ եւ ավելի ակտիվ լինելու մասին հայտարարություններին, դրանք ծիծաղելի եւ ինքնահանգստացման նման են հնչում օր օրի թուլացող Հայաստանի համար: Մանավանդ այն ֆոնին, երբ 1990-ականներին ԱՄՆ-ն ԼՂՀ ինքնորոշման ամենամեծ պաշտպանն էր, իսկ այսօր Մեթյու Բրայզան հայտարարում է, որ իրենք մտել են եռանախագահություն՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ապահովելու համար:

«Բոլոր համապետական միջոցառումները եղել են ինչ-որ խմբի համար. գնալով ավելի փոքր խմբի, ավելի շատ՝ դրսի, քան՝ ներսի»

ԷԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ